

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-16

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄՍԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«23» ____01____ 2020 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս աշխատակազմի ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ ակադ.Լ.Ա.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Նաիրա Այվազյան-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 130634600 (մեկ հարյուր երեսուն միլիոն վեց հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ -ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ -ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 130634600 (մեկ հարյուր երեսուն միլիոն վեց հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ –ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ -ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24,
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011024115
ՀՎՀՀ 00005673

ՀՀ ԳԱԱ ակադ. Լ.Ս. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի
Ինստիտուտ ՊՈԱԿ

ք. Երևան Օրբելի եղբայրների 22
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900018005620
ՀՎՀՀ 00008543

Նախագահ՝ Ռ. Մ. Մարտիրոսյան



Տնօրեն (ռեկտոր)՝ Նաիրա Այվազյան



Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

(Նաիրա Այվազյան)
(անուն, ազգանուն)

Հավելված N 1
« 23 » 01 2020 թ.
N 16 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն (ոեկտոր) Նաիրա Այվազյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 25 » հունվարի 2020 թ. N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 130634600 (մեկ հարյուր երեսուն միլիոն վեց հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Կազմակերպություն

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

Տնօրեն (ոեկտոր)



ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը Կիրառելով այժմեական նուրբ էլեկտրոֆիզիոլոգիական, հյուսվածքաբիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ, շարունակել ուսումնասիրել նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական, շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմները:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:
4. Աշխատանքի բովանդակությունը:

Հիմնարար հետազոտություններ.

Ցածրակարգ ողնաշարավորների շարժումների կառավարման ուսումնասիրությունը հանդիսանում է ԿՆՀ լաբորատորիայի հիմնական ուղղությունը: Ցանցա-, անդաստակա- և ռուբրո-ոլնուղեղային ուղիները ուղեղաբնի նեյրոններից սկիզբ առնող գլխավոր վայրընթաց պրոեկցիաներն են: Դրանցից ամենահինն է ցանցա-ոլնուղեղայինը: 2020 թ. կշարունակվեն 2019 թ. սկսված ոլնուղեղի պարանոցային և գոտկային հատվածներում վերջացող ցանցա-ոլնուղեղային նեյրոնների հետազոտությունները՝ ի պատասխան ուղեղիկի ատրիկուլյար հատվածի գրգռման: Կատարվող փորձերով հնարավոր է ավելի մանրամասն պատկերացնել օրգանիզմի շարժումների կառավարման մեխանիզմները: Գրականության մեջ այդպիսի հետազոտությունները բացակայում են: Հետազոտությունները կատարվում են գորտի պերֆուզացվող ուղեղի վրա, նեյրոնների ակտիվության ներբջջային արտածման մեթոդով: Մտացված արդյունքները, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունեն էվոլյուցիոն զարգացման տեսանկյունից:

2020թ. առնետների փորձարարական մոդելների վրա կշարունակվեն նյարդա դեգեներատիվ (ՆԴ) հիվանդությանների [Պարքինսոնի (ՊՀ) և վեստիբուլային վնասվածքի (ՄԼ- միակողմանի լաբիրինթեկտոմիա)] զարգացման մեխանիզմների բացահայտման արդիական խնդիրներն ու նրանց գործառույթների վերականգնման խնդիրները տարբեր էկզո- և էնդոգեն ծագման կենսամոդուլյատորների միջոցով: Հետազոտության նպատակն է ընդլայնել խանգարված գործառույթների նյարդապաշտպանիչ և վերականգնողական մեխանիզմների բարելավման և բուժման մասին գիտելիքները: Նախատեսվում է ուսումնասիրել հիպոկամպի և Դեյտերսի վեստիբուլային կորիզի նեյրոնների նեյրոնային մեխանիզմները նշված նյարդադեգեներատիվ հիվանդությունների դեպքում: Նրանք կարող են նաև օգտակար լինել բժշկական այն միջոցների մշակման ժամանակ, որոնք կնպաստեն ախտահարված ֆունկցիաների վերականգնմանը: Հետազոտությունների

իրականացումը կապահովեն լաբորատորիայի հինգ աշխատակիցները: Կկիրառվեն էլեկտրաֆիզիոլոգիական /ներ և արտաբջջային /գրանցման, նեյրոմորֆոլոգիական և հիստոքիմիական մեթոդներ:

2020թ. Նախատեսվում է սպեցիֆիկ նեյրոդեգեներատիվ հիվանդությունների զարգացման և պրոտեկցիայի մեխանիզմների ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների շարունակություն: Պետք է շարունակվեն Պարկինսոնի հիվանդության մեջ ընդգրկված կեղևանիգրալ և պալիդոմիգրալ պրոյեկցիաներում զարգացման ու պրոտեկցիայի մեխանիզմների ուսումնասիրությունները: Կսկսվեն Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա ուղեղի Նախալիմբիկ կեղևի Պոչավոր կորիզ և Պոտամեն պրոյեկցիաների վրա, ինչպես նաև Ալցհայմերի հիվանդության մոդելի վրա երկարատև հիշողության կառույցներում Մեյներտի կորիզի և Նշաձև կորիզի ուսումնասիրությունները, որոնք կարևոր են Ալցհայմերի հիվանդության զարգացման համար: Վերջապես, նախատեսվում է, ցավազրկող միջոցներին չենթարկվող նեյրոդեգեներատիվ հիվանդությունների ժամանակ կտրուկ փոփոխվող էնդոգեն մոդուլյատորներով պրոտեկցիայի պայմաններում ուղեղի հականցիցեպտիվ կառույցների հարջրանցքային գորշ նյութի և Կարի մեծ կորիզի ուսումնասիրությունները, որոնք նպաստում են անտանելի և քրոնիկ ցավին, հասկապես Պարկինսոնի հիվանդության ժամանակ: Նշված ուսումնասիրությունները, մասնավորապես, վերջինները, շատ արդիական են և ներկա պահին կլինիկական պայմաններում հիվանդների մոտ փաստացի միայն ուսումնասիրվում են ցավի շեմքի գնահատման մակարդակով: Ոլանավորվում է վերոնշված ոլորտներում մեկ դոկտորական աշխատանքի ավարտ ու պաշտպանություն և չորս թեկնածուական դիսերտացիաների աշխատանքի սկիզբ:

Ողնուղեղի արքունային վերընթաց և վարընթաց ուղիների բաժանումը/ապամիավորումը, պայմանավորված առնետների ողնուղեղի լատերալ/կողմնային կիսահատումով, հանդես է գալիս որպես ներողնուղեղային և ներգլխուղեղային նյարդային/սինապսային պլաստիկականության հետմասվածքային նախակլինիկական մոդել [Schmidt, 2018]: Ողնուղեղի գոտկային հատվածի կիսահատումից հետո գլխուղեղի վարընթաց հսկողության կորուստը խթանում է նյարդային շղթաների ադապտիվ վերակազմակերպում ինչպես գլխուղեղում, այնպես էլ ողնուղեղում [Fong et al., 2009]: Mesencephalic locomotor region (MLR)-ը ողնուղեղի լոկոմոտոր նեյրոնների ակտիվացման և հսկողության կորոդինացնող կենտրոն է, որի ներուժի գնահատումը շարժողական ֆունկցիայի վերականգնման գործընթացում ակտուալ է ողնուղեղային վնասվածքի ժամանակ [Ryczko, Dubuc, 2013]: Նախատեսվում է ողնուղեղի գոտկային հատվածի կիսահատումից հետո in vivo արտաբջջային էլեկտրաֆիզիոլոգիական եղանակով ուսումնասիրել գլխուղեղի MLR սինապսային պլաստիկականությունը նստանյարդի խթանման ժամանակ: Ծայրամասային նյարդի խթանումով հրահրված գլխուղեղի MLR բջջային ակտիվության գնահատումն ունի գիտակիրառական նշանակություն ողնուղեղի գոտկային հատվածի հետտրավմատիկ ինքնաբուխ վերականգնման ախտաֆիզիոլոգիայում:

Պարկինսոնի հիվանդության (ՊՀ) դեպքում արդյունավետ կարող լինել է այն բուժումը, որն ուղղված է դոպամիներգիկ նեյրոնների կորստի դանդաղեցմանը: Օձերի թույներն ունեն նեյրոպրոտեկտիվ հատկություններ: Նախատեսվում է թույնով բուժման արդյունավետությունը գնահատելու համար կատարել մորֆոհիստոքիմիական ուսումնասիրություններ առնետների ուղեղի սև նյութի և դժգույն գնդի նյարդաբջիջները ՊՀ-ն ռոտենոնային մոդելի վրա, որը զուգակցվելու է կենտրոնասիական կորբայի և հայկական իժի թույներով պրոտեկցիայի հետ: Աուտիզմը նյարդային համակարգի զարգացման խախտում է, որը բնորոշվում է բազմազան դրսևորումներով, առաջին անգամ նշվում է մանկության ժամանակ: Դա ուղեղի զարգացման փուլերի վրա բազմաթիվ

գործոնների ազդեցության արդյունք է և ազդում է ուղեղի տարբեր ֆունկցիոնալ համակարգերի վրա: Աուտիզմի փորձարարական մոդելում նախատեսվում է կատարել առնետների ձագերի ուղեղի մորֆոհիստոքիմիական հետազոտություն:

Ճալոպյան փողերը՝ լինելով միասնական վերարտադրողական օրգանի սահմաններում գույգ խոռոչավոր օրգաններ, բնութագրվում են նույնատիպ ֆիզիոլոգիական բնութագրիչներով: Բնական է, որ դրա հետ մեկտեղ, յուրաքանչյուր փողին կարող են բնորոշ լինել որոշակի առանձնահատկություններ, որը կարող է կախված լինել այնպիսի գործոններից, ինչպիսիք են ամբողջ վերարտադրողական համակարգի ֆիզիոլոգիական վիճակը, որոշակի հորմոնալ ֆոնի առկայությունը և այլն: Ելնելով վերը նշվածից, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում արգանդի երկու փողերի էլեկտրոֆիզիոլոգիական ակտիվության ցուցանիշների նմանության բացահայտումը: Այդ խնդրի հետազոտմանն էլ նվիրված են լինելու ընթացիք տարում մեր հետազոտությունները:

Կենդանական թույների և դրանց առանձին բաղադրիչների տարբեր հատկությունների ուսումնասիրությունները անհրաժեշտ են թե՛ դեղորայքային, ախտորոշիչ և կոսմետիկ պատրաստուկների արտադրության համար, թե՛ դրանց ներուժի հայտնաբերման համար, որպես մի շարք կենսաբանական գիտությունների հետազոտության գործիք: Թունաբանական հիմնարար հետազոտությունների արդյունքները նպատակաուղղված են մարդու եւ կենդանիների ֆիզիոլոգիայի, դեղագործության եւ պրակտիկ բժշկության բնագավառում օգտագործվելու ուղղությամբ: 1. Առնետների վրա գյուրգայի թույնը որպես անոթալայքայիչ գործոնի օգտագործմամբ հեմոռագիկ ինսուլտի մակաձում և վարքագծի հետազոտում:

2. Տարբեր կենդանական թույների հականցիցեպտիկ ներուժի համեմատական հետազոտություն: 3. Գյուրգայի թույնի ցածր չափաբաժինների օգտագործումը ԱՌԻՊ-ի /արյունաուղեղային պատնեշ/ թափանցելիության մեծացման համար, որոշ դեղորայքային գործոններ անմիջապես ուղեղի հյուսվածք հասցնելու նպատակով:

4. Կենդանական թույների առանձին բաղադրիչների մեկուսացում և դրանց ազդեցության առանձնահատկությունների ուսումնասիրություն Հայ Ռուսական /Սլավոնական/ համալսարանի, ԵՊՀ-ի և Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հետ համատեղ: 5. «Կենդանական թույները որպես գիտական հետազոտության գործիք» ներկայացվող դասընթացի պատրաստում:

Կիրառական հետազոտություններ.

- ***Գյուրգա և այլ Էնդեմիկ օձերի թույնի դեմ հակաթույնի արտադրություն և հարակից պրոդուկտների մշակում***

Գալիք 2020թ. մենք պլանավորում ենք գյուրգայի և հայկական իժի թույնի դեմ մոնոկլալնտ հակաթույների Fab և F(ab2) իմունոլոգիական տարատեսակների ստացումը խոյերի իմունիզացիայի միջոցով, շարունակել գյուրգայի թույնի դեզինտեգրին՝ օբոուստատինի ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությունը որոշ քաղցկեղների դեպքում, ինչպես նաև պարզաբանել և գնահատել երեք տեսակի իժերի (*Macrovipera lebetina obtusa*, *Montivipera raddei*, *Vipera latifi*) թույնի ազդեցության բնույթը մարդու արյան էրիթրոցիտների ստվերների վրա և մի շարք հյուսվածքային կուլտուրաների աճի և ֆունկցիայի վրա: Բացահայտվել է *Macrovipera lebetina obtusa* և *Montivipera raddei* օձերի թույների նյարդակաթվածային ազդեցությունը առնետների նյարդամկանային կոմպլեքսի վրա և դրա համեմատությունը կորբայի թույնի ազդեցության հետ:

Էլեկտրոֆիզիոլոգիական մեթոդների կիրառմամբ ցույց է տրվել, որ սույն օձերի թույլները բացի դասական հեմոռագիկ ազդեցությունից ներգործում են նաև նյարդային համակարգի վրա փորձարարական կենդանիների վրա առաջացնելով նյարդամկանային կաթված: Նաև իրականացվելու են հետազոտություններ ֆոսֆոլիպազների և թույլների ազդեցության կինետիկ պատկերի պարզաբանման ուղղությամբ Բելառուսի ԳԱԱ կենսաֆիզիկայի և բջջային ինժինեռիայի ինստիտուտի (Մինսկ) հետ միասին, օգտագործելով իրենց նյութատեխնիկական բազան:

➤ ***Բժշկական սարքաշինություն***

2020թ. Նախատեսվում է սպեցիֆիկ նեյրոդեգեներատիվ հիվանդությունների զարգացման և պրոտեկցիայի մեխանիզմների ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների շարունակություն: Պետք է շարունակվեն Պարկինսոնի հիվանդության մեջ ընդգրկված կեղևանիգրալ և պալիդոնիգրալ պրոյեկցիաներում զարգացման ու պրոտեկցիայի մեխանիզմների ուսումնասիրությունները: Կսկսվեն

Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա ուղեղի Նախալիմբիկ կեղևի Պոչավոր կորիզ և Պոտամեն պրոյեկցիաների վրա, ինչպես նաև Ալցհայմերի հիվանդության մոդելի վրա երկարատև հիշողության կառույցներում Մեյներտի կորիզի և Նշաձև կորիզի ուսումնասիրությունները, որոնք կարևոր են Ալցհայմերի հիվանդության զարգացման համար: Վերջապես, նախատեսվում է, ցավազրկող միջոցներին չենթարկվող նեյրոդեգեներատիվ հիվանդությունների ժամանակ կտրուկ փոփոխվող էնդոգեն մոդուլյատորներով պրոտեկցիայի պայմաններում ուղեղի հականոցիցեպտիվ կառույցների հարջրանցքային գորշ նյութի և Կարի մեծ կորիզի ուսումնասիրությունները, որոնք նպաստում են անտանելի և քրոնիկ ցավին, հատկապես Պարկինսոնի հիվանդության ժամանակ: Նշված ուսումնասիրությունները, մասնավորապես, վերջինները, շատ արդիական են և ներկա պահին կլինիկական պայմաններում հիվանդների մոտ փաստացի միայն ուսումնասիրվում են ցավի շեմքի գնահատման մակարդակով: Պլանավորվում է վերոնշված ոլորտներում մեկ դոկտորական աշխատանքի ավարտ ու պաշտպանություն և չորս թեկնածուական դիսերտացիաների աշխատանքի սկիզբ:

➤ ***Մեզենքիմալին ցողունային բջիջներից փոխպատվաստման համար ֆունկցիոնալ մաշկային հյուսվածքի ստացում /աճեցում:***

2020թ-ին լաբորատորիան կշարունակի գիտափորձերը ճարպային հյուսվածքներից ստացված մեզենքիմալ բջիջների շտեմարանի համալրման ուղղությամբ, բարելավել ապաբջջայնացման և վերաբջջայնացման գործընթացները: Ad-MSC իմունոմոդուլյատոր մեխանիզմների ուսումնասիրությունը մեկ այլ ուղղություն է, որն կիրականացվի Բելառուսի պետական համալսարանի հետ համատեղ: Այս համագործակցության շրջանակներում նախատեսվում են համատեղ գիտափորձեր և երիտասարդ գիտնականների վերապատրաստում: Նախատեսվում է նաև դրամաշնորհի գիտական ղեկավարների այցելություն համագործակցող կազմակերպություններ՝ գիտելիքի և փորձի փոխանակման համար, ընթերցելով մի շարք դասախոսություններ: Փորձերի արդյունքները կտպագրվեն հայաստանյան և միջազգային պարբերականներում և կներկայացվեն գիտաժողովների ժամանակ, ինչպես 2019թ-ին: Ի հավելումն, ուսանողներն հնարավորություն կունենան բարելավել իրենց լաբորատոր հմտություններն ու գիտելիքները:

➤ **Հոգեֆիզիոլոգիական էքսպերտիզա**

2020թ. լաբորատորիայում հետազոտությունները պետք է իրականացվեն երեք հիմնական ուղղությամբ. 1. Շարունակվելու են գլխուղեղի ֆունկցիոնալ վիճակի կենսառիթմոլոգիական առանձնահատկությունների համալիր ուսումնասիրություններն ուղղված գլխուղեղի զգայաշարժողական կարգավորման ոլորտի կարճատև տիրույթի տատանողական դինամիկայի առանձնահատկությունների բացահայտմանը պարզ և բարդ տեսա-շարժողական ռեակցիաների ժամանակային ցուցանիշների վերլուծությամբ: 2. Մշակվելու է անձի անհատական կենսաբանական առանձնահատկությունների, ինչպես նաև վերբալ գրգռիչի նկատմամբ օրգանիզմի ֆունկցիոնալ փոփոխությունների ուսումնասիրության հոգեֆիզիոլոգիական հետազոտական մեթոդների որակապես նոր համակարգ համակարգչային պոլիգրաֆի կիրառմամբ: Մշակվող մեթոդական մոտեցումներում ներառվելու են անհատի կոնֆլիկտայնության մակարդակի փորձագիտական հոգեֆիզիոլոգիական գնահատումը, անհատական խառնվածքի տիպերի որոշումը, սթրեսակայունության մակարդակի բացահայտումը: 3. «PSI» ֆիրմայի հետ համատեղ կշարունակվեն նոր դասի, բարձր զգայունակությամբ օժտված SFCO-տվիչների (բարձրազգայուն մագնիսաչափեր) բժշկա-կենսաբանական խնդիրում կիրառման հեռանկարայնությունը: Կշարունակվեն այդ SFCO-տվիչների ցուցանիշների կայունության և կրկնողունակության գնահատուման աշխատանքները:

Կազմակերպության
ունօրեն (ռեկտոր)՝


(ստորագրություն)

(Նաիրա Այվազյան)
(անուն ազգանուն)

Օրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Նաիրա Այվազյան)
(անուն ազգանուն)



Հավելված N 3
 2020 թ.
 N 23 21 պայմանագրի
25-16

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի

Իրականացվելիք միջոցառման						
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
	«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը»	1. Բացահայտել օրգանիզմի շարժողական ֆունկցիաների կենտրոնական կազմակերպման ինտեգրատիվ և պլաստիկական մեխանիզմները 2. Բացահայտել օրգանիզմի վեգետատիվ ֆունկցիաների կարգավորման կենտրոնական և ծայրամասային մեխանիզմները:	1. Փորձերի կատարում առնետների, մկների, ճագարների և բջջային կուլտուրաների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրա-ֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական մաթեմատիկական և այլ ընտրանքային մեթոդները: 2. Փորձերի կատարում առնետների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրա-ֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ:	Արդյունքների հրապարակում գրաքննարկ տեղական և միջազգային հանդեսներում	31.12.2020թ.	130634600 (մեկ հարյուր երեսուն միլիոն վեց հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:
Ընդամենը						

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝

(ստորագրություն)

(Նարիա Ավագյան)

(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

(Նարիա Ավագյան)

(անուն ազգանուն)

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել ենամսյակային փուլերով

Հավելված N 4
 « 23 » 02 2020 թ.
 N 7-16 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	95,000.0	19,000.0	23,750.0	23,750.0	28,500.0
2	տնտեսական և այլ ծախսեր*	35,634.6	7,126.9	8,908.7	8,908.7	10,690.4
ԸՆԴԱՄԵՆԸ		130,634.6	26,126.9	32,658.7	32,658.7	39,190.4

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝

(ստորագրություն)

(Նսիրա Ավագյան)
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(ստորագրություն)

(Կարինե Հակոբյան)
 (անուն ազգանուն)



* Բուժերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	17219.9
	էլեկտրաէներգիայի ծառայություն	9300.0
	գազի ծառայություն	4628.5
	ջրամատակարարման ծառայություն	1880.0
	կապի ծառայություն	1100.0
	աղբահանություն	311.4
	Այլ ծախսեր, այդ թվում՝	18414.7
2	Գույք	0.0
3	Սարքեր և սարքավորումներ	2000.0
4	Նյութեր	5302.2
5	Գործուղումներ	4526.5
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	500.0
7	Արշավախմբեր	0.0
8	Հրատարակման ծախսեր	1868.0
	Այլ	4218.0
Ընդամենը		35634.6

Կազմակերպության տնօրեն՝ [Ստորագրություն] (ստորագրություն) (Նաիրա Այվազյան) (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ [Ստորագրություն] (ստորագրություն) (Կարինե Հակոբյան) (անուն ազգանուն)



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

“Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը”
ծրագրի


Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Այվազյան Նաիրա Մարտինի	Տնօրեն	կ.գ.դ.	180.0
2	Մադաթյան Հավհաննես Արսենի	Տնտեսակ.գծով փոխտնօրեն		133.0
3	Եզանովա Վալենտինա Սուրենի	Գիտ.քարտուղար	բ.գ.թ.	103.0
4	Հակոբյան Կարինե Գեղամի	Գլխավոր հաշվապահ		134.0
5	Ավետիսյան Էլմիրա Ալեքսանդրի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	90.6
6	Պետրոսյան Անահիտ Աղվանի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	90.6
7	Ներզոզովա Քրիստինա Ալեքսանդրի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
8	Մելտոնյան Աշոտ Վարազդատի	Կրտսեր գիտ.աշխատող		93.6
9	Ավազյան Արև Արմենի	Ցանցային ադմինիստրատոր		47.5
10	Մանվելյան Լևոն Ռաֆայելի	Լաբորատորիայի վարիչ	թղթ.-անդամ	110.0
11	Թերզյան Դիանա Օնիկի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
12	Խոնեցյան Նելլի Սոսի	Ավագ լաբորանտ		90.6
13	Մադաթյան Հավհաննես Արսենի	Ավագ ինժեներ		30.0
14	Մեղավորյան Ռուբեն Էդուարդի	Ինժեներ		90.6
15	Օհանյան Լիա Ռազմիկի .	Կրտսեր գիտաշխատող		93.6
16	Սարգսյան Վաղինակ Հայկազի	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110,0
17	Բաղդասարյան Սուսաննա Հակոբի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.դ.	90.6
18	Մանուկյան Լարիսա Փայլակի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
19	Համբարձումյան Լիլիա Էդիկի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
20	Ինջեյան Ազնիվ Հակոբի	Ավագ լաբորանտ		90.6
21	Սարգսյան Նաիրա Վաղինակի	Լաբորանտ		47.5
22	Պապյան Վերգինե Անդրանիկի	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110.0


* Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը


23	Նահապետյան Խաչիկ Հովսեփի	Առաջատար գիտաշխատող	կ.գ.դ.	90.6
24	Սիմոնյան Կարեն Վազգենի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
25	Ավետիսյան Ռիմա Ավետիսի	Լաբորանտ		93.6
26	Իսոյան Արմինե Սամվելի	գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
27	Ավետիսյան Լիլիթ Գագիկի	գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
28	Լորիկյան Անի Գագիկովնա	գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
29	Սարգսյան Ջոն Սարգսի	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110,0
30	Ավետիսյան Ջուբեյդա Ալեքսանի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	90.6
31	Ցականյան Կարեն Վասիլիի	Ինժեներ	կ.գ.թ.	90.6
32	Պողոսյան Միխայիլ Վալերիի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
33	Ստեփանյան Հարություն Յուրիի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
34	Մելիքյան Լեվոն Մելիքի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
35	Հարությունյան Տիգրան Կարենի	Կրտսեր գիտաշխատող		47.5
36	Ավետիսյան Աստղիկ Վարուժանի	Լաբորանտ		90.6
37	Խաչունց Ալեքսանդր Սերգեյի	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.թ.	110,0
38	Կոստանյան Էսմա Գուրգենի	Ավագ գիտ.աշխատող	բ.գ.թ.	38,0
39	Թաթևոսյան Իրա Գարեգինի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	38,0
40	Թաթևոսյան Նարինե Էդուարդի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	90.6
41	Պանչուլազյան Կարեն Անուշավանի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	90.6
42	Թումանյան Անուշ Արզանի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
43	Ղևոնդյան Տիգրան Հակոբի	Լաբորատորիայի վարիչ	բ.գ.դ.	72,7
44	Դանիելյան Մարգարիտա Հարությունի	գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
45	Նազարյան Օֆիկ Համբարձումի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	45.9
46	Խաչատրյան Վահագն Պերճի	կրտսեր գիտ.աշխատող		47.5
47	Կարապետյան Քրիստինե Վանիկի	կրտսեր գիտ.աշխատող		93.6
48	Ղազարյան Քնարիկ Վահանի	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110,0
49	Հունանյան Նաիրա Գևորգի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
50	Չիբուխչյան Ռոզա Գարուշի	գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
51	Փիլիփոսյան Տաթևիկ Արտավազդի	կրտսեր գիտ.աշխատող		93.6
52	Մկրտչյան Հերմինե Խաչիկի	լաբորանտ		47.5
53	Սարգսյան Ռաֆիկ Շավարշի	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110,0
54	Սարգսյան Վահրամ Ռաֆիկի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
55	Մանուկյան Արմեն Միսակի	Կրտսեր գիտ.աշխատող		90.6
56	Քարամյան Գագիկ Գուրգենի	Ավագ	ֆ.-մ.գ.թ.	34.8

		գիտ.աշխատող		
57	Կոստանյան Հասմիկ Լավրենտիի	Կրտսեր գիտ.աշխատող		34.8
58	Միսակյան Լևոն Հրաչի	Ավագ ինժեներ		77.2
59	Էմիլեան Իրինա Արտեմի	գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
60	Սիմոնյան Լուիզա Գագիկի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	24.4
61	Ոսկանյան Արմեն Վաղինակի	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.թ.	110,0
62	Անտոնյան Մարինա Վազգենի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	90.6
63	Դարբինյան Աննա Աշոտի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
64	Պարսեղյան Լիլյա Մուշեղի	կրտսեր գիտ.աշխատող		93.6
65	Բուռնազյան Տիգրան Ռեմիքի	Ինժեներ		90.6
66	Այվազյան Նաիրա Մարտինի	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	60,0
67	Կիրակոսյան Գայանե Ռաֆայելի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
68	Թադևոսյան Հասմիկ Հենրիկի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
69	Ղազարյան Նարինե Ալբերտի	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	65.0
70	Բարսեղյան Արամ Գալուստի	Ինժեներ		93.6
71	Ղուլիկյան Լուսինե Ալմիրի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	93.6
72	Քիշմիրյան Արսեն Վլադիկի	Գիտ.աշխատող		93.6
73	Ղուկասյան Գևորգ Վահանի	Կրտսեր գիտ.աշխատող		93.6
74	Պետրոսյան Մոսե Սամվելի	Լաբորանտ		93.6
75	Կարաբեկյան Զարուհի Իվանի	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.թ.	72,7
76	Գրիգորյան Վահան Սուրենի	Կրտսեր գիտ.աշխատող		47.5
77	Քերյան Անդրանիկ Գեղամի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	47.5
78	Սարգսյան Հարություն Հրաչիկի	Կրտսեր գիտ.աշխատող		47.5
79	Սևոյան Գոհարիկ Պետրոսի	լաբորանտ		70.6
80	Զիլինգարյան Նարեկ Արթուրի	լաբորանտ		70.6
81	Կիրակոսյան Վարազդատ Արնշատի	Պարետ		117.0
82	Պողոսյան Էլմիրա Գալուստի	Գանձապահ		33.5
83	Մեղավորյան Մարինա Ռաչիկի	Կադրերի ավագ տեսուչ		117.6
84	Կարապետյան Լիանա Էդուարդի	Քարտուղար		105.0
85	Խաչատրյան Սոնյա Արտաշի	Գրադարանի վարիչ		35.0
86	Օհանյան Սուրեն Սերգեյի	Բանվոր		90,6
87	Պետրոսյան Էդգար Վալերիի	Վերելակավար		47,5
88	Նաջարյան Արմեն Սերյոժայի	Վարորդ		133.6
89	Կարապետյան Ռուզաննա Արմենակի	Հաշվետար		60.0
90	Սանուկյան Ռուբեն Գալուստի	Էլեկտրիկ- սանտեխնիկ		96.5
91	Հայրապետյան Անուշ Ջանիբեկի	Կենդանանոցի աշխատող		90,6

92	Եզանյան Այգիկ Արամայիսի	Հավաքարար		90,6
93	Նահապետյան Վարդան Ստեփանի	Բանվոր		93,6
Ընդամենը				7916.4

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝  (Նահրա Այվազյան)

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝  (Մարինա Մեղավորյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝  (Նահրա Այվազյան)

